ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. III

21-րդ դարի մարտահրավերներ և հնարավորություններ

DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:
Challenges and Opportunities of 21st Century

РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:
вызовы и возможности 21-ого века

ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ

2017 թ., նոյեմբերի 22-24

Երևան 2018

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65
Տ 778

Հրատարակվում է
ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհրդի նախագահ՝

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր

Խմբագրական խորհուրդ՝

ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ - *ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., դոցենտ*
ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ - *ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ - *ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԽՈՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, տ.գ.թ., դոցենտ*
ԱՇՈՏ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ - *ՀՊՏՀ տնտես. ինֆորմ. և տեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., տ.գ.դ., պրոֆեսոր*
ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ - *ՀՊՏՀ պրոռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր*

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և
Տ 778 **հնարավորություններ**: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ, 2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Գիտաժողովի հարգելի՝ մասնակիցներ,

շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 27-րդ գիտաժողովի բացման առթիվ և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հետաքրքրություն են ցուցաբերել տնտեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրատապ հարցերի նկատմամբ:

Մեր համալսարանի տարեկան գիտաժողովները գեղեցիկ ավանդույթ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող այլ ձևաչափեր նույնպես: Հպարտությամբ եմ նշում, որ հետազոտական համալսարան դառնալու և մեր պետության տնտեսական կյանքին մասնագիտական մասնակցություն ունենալու իմ տեսլականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի գործունեությունն այսօր տալիս է նշանակալի արդյունքներ. այստեղ ոչ միայն իրականացվում են հանրապետության տնտեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հետազոտություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:

Մինչ տարեկան գիտաժողովի կազմակերպումը գիտական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական տարվանից տրվեց գիտաուսումնական լաբորատորիաների մեկնարկը, ինչը գիտական դրամաշնորհներ, գիտաուսումնական խմբեր և գիտահետազոտական կյանքի աշխուժացմանը միտված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոտեցումների հրաշալի շարունակությունն է:

Համալսարանի տարեկան գիտաժողովը ես հատկապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիտական ներուժը, ցույց տա համալսարանում գիտական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հետագա գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիտաժողովի հիմքում տնտեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցույց են դնում մեր դարաշրջանի մարտահրավերներն ու հնարավորությունները: Իսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չպետք է անտարբեր թողնեն տնտեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ տնտեսության:

Հուսով եմ, որ գիտաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կտա մասնագետներին ներկայացնելու իրենց մոտեցումները, բացահայտելու գիտաժողովի խորագրում արտացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխույժ աշխատանք եմ մաղթում Ձեզ:

Շնորհակալ եմ ուշադրության համար:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

ARMEN HAKOBYAN
MARE KHACHATRYAN

THE INFLUENCE OF CUSTOMS VALUE ON THE PRICES OF GOODS IN INTERNAL MARKET

Key Words: *import, customs value, price, economy, customs regulation*

Within this article we tried to show the connection between customs value and prieces of goods in internal market in RA. By using resolution we found out that using corrective coefficients by the customs authorities leads to the rising of prices for goods in the market, which hampers the development of free market relations and the country's participation in international integration. In order to solve these problems, we are proposing certain measures for customs regulation, the application of which will allow to record positive results.

ՄՈՒՇԵՂ ՀԱԿՈԲՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ՀՊՏՀ

ՀԱՆՐԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

Հիմնաբառեր. *հանրային ծրագիր, կյանքի արժեք, հասարակական նախապատվություն, արդյունավետ բաշխում, բաշխվող կշիռ, սոցիալական արդարություն*

Հոդվածում կատարվել է հանրային ծրագրերի իրականացման ծախսերի ու ակնկալվող արդյունքների համադրություն՝ կարևորելով շուկայական գին չունեցող արդյունքների գնահատման անհրաժեշտությունը: Քննարկվել են ժամանակի արժեքի կյանքի արժեքի, բնական բարիքների արժեքի գնահատման մեթոդները: Հոդվածում կատարվել է նաև հանրային ծրագրերի բաշխման էֆեկտի գնահատումը:

Պետական ծրագրերի վերլուծության ժամանակ կարելի է առանձնացնել երկու կարևորագույն բաժիններ: Առաջին հերթին դա պետական ծախսերի որակական վերլուծությունն է այս կամ այն ուղղությամբ, այդ ծախսերի հնարավոր հետևանքների գնահատումը տնտեսական արդյունավետության և սոցիալական արդարության տեսանկյունից: Երկրորդ, պետական ծրագրերի ծախսերի և օգուտների քանակական վերլուծությունն է:

Պետական ծախսերի ծրագրի որակական վերլուծությունը ներառում է հետևյալ ասպեկտները.[1]

[1] Стиглиц Дж. Ю., Экономика государственного сектора (пер. с англ.). М., Изд-во МГУ, 1997.

- ծրագրի սկզբունքային անհրաժեշտության հիմնավորում,
- շուկայի այն ձախողումների հայտնաբերում, որոնց կանոնավորմանն է ուղղված ծրագիրը,
- տվյալ կոնկրետ դեպքում պետական միջամտության տարբեր ձևերի որոշում,
- տնտեսության տվյալ ոլորտի արդյունավետության վրա ծրագրի ներգործության գնահատում,
- սոցիալական արդարության, բաշխման վրա ծրագրի ազդեցության գնահատում:

Պետական ծախսերի ծրագրի **քանակական վերլուծությունը** ենթադրում է ծրագրի գնահատում ծախսերի և օգուտների տեսանկյունից, դրանց համադրումը արժեքային արտահայտությամբ:

Օրինակ՝ կարևոր է ոչ միայն ապացուցել գետի վրա կամուրջի շինարարության անհրաժեշտությունը, այլ նաև որոշել կամուրջի շինարարության վրա հասարակական ծախսերի մասշտաբները, ընտրել կամուրջի տարբեր նախագծերից ամենալավ տարբերակը:

Սկզբունքերեն պետական հատվածի ծախսերի և օգուտների վերլուծությունը հիմնված է համընդհանուր մոտեցումների վրա: Այն ենթադրում է.

- ընդհանուր և սահմանային ծախսերի արժեքային գնահատում,
- ընդհանուր և սահմանային օգուտների գնահատում,
- ծախսերի և օգուտների համադրում,
- օպտիմալ տարբերակի ընտրություն՝ կողմնորոշվելով դեպի սահմանային ծախսերի և սահմանային օգուտների հավասարությունը,
- օպտիմալ տարբերակի ընտրություն՝ կողմնորոշվելով դեպի ընդհանուր օգուտների և ընդհանուր ծախսերի տարբերության մաքսիմալացում:

Պետական ծախսերի և օգուտների վերլուծության դեպքում առանձնահատուկ դժվարություն է ներկայացնում այնպիսի ծախսերի և օգուտների գնահատումը, որոնք չունեն շուկայական գին: Օրինակ՝ դժվարություն է ներկայացնում հանրային առողջապահության ոլորտում այս կամ այն նախագծի վերլուծության դեպքում փրկվող կյանքի արժեքը կամ շրջակա միջավայրի պահպանության նախագծի քննարկման դեպքում պահպանվող կենդանական աշխարհի արժեքի, հազվագյուտ բուսատեսակների արժեքի գնահատումը, խնայված ժամանակի արժեքը և այլն: Այս առումով առանձնացվում են.[1]

- ժամանակի արժեքի գնահատումը,
- կյանքի արժեքի գնահատումը,
- բնական բարիքների արժեքի գնահատումը:

Ժամանակի արժեքի գնահատումը կատարվում է խնայված ժամանակի գնահատմամբ: Խնայված ժամանակի գինը անհրաժեշտ է ներառել օգուտների գնահատման մեջ, երբ վերլուծվում են այնպիսի պետական ծրագրեր, որոնք ուղղված են ավտոմոբիլային և երկաթուղային ճանապարհների, մետրոպոլիտենի կամ ճանապարհների շինարարությանը: Այդպիսի օգուտների հաշվարկման տարբերակներից մեկը վերավերում է ժամանակի

[1] Пономаренко Е. В., Исаев В. А., Экономика и финансы общественного сектора. Учебник, М., 2007.

գնահատմանը, որպես բաց թողած կամ ձեռք բերված եկամտի համարժեք: Ժամանակի արժեքի գնահատմանն են վերաբերում.

1) աշխատանքի և ազատ ժամանակի (հանգստի) միջև ընտրությունը,
2) ժամանակի արժեքի գնահատումը ազատ ժամանակի (բաց թողնված աշխատավարձի) այլընտրանքային ծախսերի չափով,
3) մարդկանց մոտ աշխատանքի և հանգստի միջև ընտրության ազատության հաճախ բացակայումը,
4) ժամանակի արժեքի ինչպես թերագնահատման, այնպես էլ դրա գերագնահատման հնարավորությունները:

Նմանատիպ մոտեցում է կիրառվում նաև **կյանքի արժեքի գնահատման** դեպքում: Սկզբունքորեն կյանքը անգին է, մեզանից ոչ ոք չէր ցանկանա նույնիսկ մտածել այն մասին, թե որքան արժե իր մտերիմ մարդկանց կյանքը: Բայց հասարակությունը շատ դեպքերում ստիպված է գնահատել այն: Դրա վառ օրինակ է հանդիսանում փրկված կյանքի արժեքի գնահատման անհրաժեշտությունը, երբ վերլուծվում է այնպիսի ծրագրերի ծախսերը և օգուտները, ինչպիսիք են ճանապարհատրանսպորտային պատահարների մակարդակի նվազեցման, հասարակական առողջապահության, հիվանդացության և մահացությանն ուղղված ծախսերը: Այդ անհրաժեշտությունն առաջանում է կապված հասարակական ռեսուրսների սահմանափակության և այդ ռեսուրսների օգտագործման տարբերակների բազմազանության հետ: Նույնիսկ այն նախագծերի դեպքում, որոնք ուղղված են մարդկային կյանքի պահպանմանը, դրական արդյունքի հավանականությունը կարող է լինել շատ փոքր: Այդ դեպքում նվազում է նախագծի տնտեսական նպատակահարմարությունը: Հիմնականում կյանքի արժեքի գնահատման ժամանակ կիրառվում են հետևյալ մեթոդները. *վերագրված եկամտի մեթոդ և դրսևորված նախապատվությունների մեթոդ*[1]:

Վերագրված եկամտի մեթոդը գլխավորապես կիրառվում է կյանքի արժեքի գնահատման համար կենսացիկլի աշխատանքային ժամանակահատվածում: Այն հիմնված է այն բանի գնահատման վրա, թե մարդը որքան գումար կարող է վաստակել, եթե նա կենդանի մնա և հեռանկարում մահանա բնական մահով: Նրա անցյալ եկամուտները վերարտադրվում են ապագայում:

Այս մեթոդը ունի իր թերությունները: Դրանցից մեկն այն է, որ գոյատևման միջոցների արժեքը և կյանքի արժեքը նույնացվում են, գոյատևման միջոցները և կյանքը հավասարեցվում են: Եկամտի ստեղծումը շատ մարդկանց համար չի հանդիսանում կյանքի իմաստը, այդ պատճառով այն չի կարող հիմք հանդիսանալ կյանքի արժեքի գնահատման համար:

Վերագրված եկամտի մեթոդի մյուս թերությունը հանդիսանում է կենսացիկլի այնպիսի կարևոր փուլի անտեսումը, ինչպիսին է կյանքը թոշակի անցնելուց հետո: Այդ ժամանակահատվածում մարդը գումար չի վաստակում: Ստացվում է, որ այս մեթոդի շրջանակներում թոշակի անցնելուց հետո կյանքը արժեք չունի:

[1] Տե՛ս նույն տեղը:

Դրսևորված նախապատվությունների մեթոդը այլ կերպ է մոտենում կյանքի արժեքի գնահատմանը: Մեթոդի անվանումը կապված է մասնագիտության ընտրության ժամանակ նախապատվությունների որոշման հետ: Ռիսկի բարձր աստիճանը համապատասխանեցվում է առավել բարձր աշխատավարձի հետ: Բարձր ռիսկ և բարձր աշխատավարձ, աննշան ռիսկ և ցածր աշխատավարձ – սրանք նախապատվություններ են, որոնք դրսևորվում են աշխատանքի և մասնագիտության ընտրության ժամանակ:

Բնական բարիքների արժեքի գնահատումը նույնպես իրենից ներկայացնում է խնդիր պետական նախագծերի ծախսերի և օգուտների վերլուծության մեջ: Կապված շրջակա միջավայրի աղտոտման հետ, հասարակությունը կատարում է զգալի ծախսեր նրա պահպանության և վերականգնման համար: Շրջակա միջավայրի պահպանության ցանկացած նախագիծ ենթադրում է հնարավոր արդյունքների գնահատում արժեքային ձևով այն պայմաններում, երբ շուկան չի ապահովում անհրաժեշտ տեղեկատվություն: Բացի այդ, բնական բարիքների արժեքի գնահատման խնդիրը, ծագում է վնասների գնահատման ժամանակ, օրինակ, մաքուր օդը, չաղտոտված ջուրը, ծաղկող մարգագետինը և այլն: Գործնականում, բնական բարիքների գնահատման ժամանակ կարող է կիրառվել այսպես կոչված *«պայմանական գնահատման» մեթոդը:* Այս մեթոդը դիտարկում է ընտրանքային հարցում տարածաշրջանի բնակիչների կամ ամբողջ երկրի բնակիչների շրջանում, եթե խոսքը գնում է շրջակա միջավայրի պահպանության համազգային նախագծի մասին: Հարցումը պետք է ի հայտ բերի, թե ինչպես են մարդիկ գնահատում այս կամ այն բարիքը, ինչպես են գնահատում վնասները, որոնք հասցվում են շրջակա միջավայրին: Այս առումով առաջանում է հատուկ տերմին, որով արտահայտվում է մարդու գոյության միջավայրի հետ կապված բնական բարիքների գինը՝ «կեցության արժեքը»:

Հասարակական ծրագրերի ծախսերի և օգուտների գնահատումը ենթադրում է նաև օգուտների բաշխման վրա հասարակական նախագծի ազդեցությունը: Բանն այն է, որ պետական ծախսերից օգուտները բաշխվում են ոչ հավասարաչափ: Մասնավորապես՝ ջրամբարի շինարարությունից օգուտները, որը կարգավորում է ջրի քանակությունը ջրհորում (իսկ ջրհորի ջուրը օգտագործվում է որոշակի քաղաքի բնակիչներին ապահովելու համար), բաշխվում են գլխավորապես քաղաքի բնակչությանը: Զբաղվածության ծառայության կողմից որակավորման բարձրացման համակարգի ֆինանսավորումից օգուտները բաշխվում են գլխավորապես գործազուրկների միջև, որոնք գրանցված են զբաղվածության ծառայությունում:

Հասարակական նախագծի բաշխման էֆեկտի գնահատումը ենթադրում է վերաբաշխման կարևորագույն ասպեկտների որոշում: Դա առաջին հերթին եկամուտների վերաբաշխումն է նախագծում ներգրավված բնակչության խմբերի միջև, օգուտներ ստացող խմբերի որոշումը և կորուստներ կրող խմբերի որոշումը (միջխմբային վերաբաշխում): Երկրորդ՝ դա օգուտների վերաբաշխումն է տարածաշրջանների միջև, որոնք ներառված են տվյալ նախագծում, այն տարածաշրջանների որոշումը, որոնք քիչ թե շատ շահում են կոնկրետ նախագծի իրականացումից (միջտարածաշրջանայինային վերաբաշխում):

Այդ առումով կիրառվում է բաշխման վրա նախագծի ազդեցության գնահատման երկու հիմնական մեթոդ.[1]

1) բաշխվող կշիռների մեթոդ,

2) ընդհանուր անհավասարակշռության փոփոխության գնահատման մեթոդ:

Բաշխվող կշիռների մեթոդի դեպքում առաջին հերթին ելնում են այն բանից, որ եկամուտների բաշխումը շուկայական տնտեսությունում ի սկզբանե համարվում է անհավասարաչափ: Երկրորդ հերթին այն բանից, որ լրացուցիչ եկամտի սահմանային օգտակարությունը աղքատ մարդու համար գերազանցում է հարուստ մարդու համար լրացուցիչ եկամտի սահմանային օգտակարությանը: Երկրորդ ենթադրությունը հիմնվում է նվազող սահմանային օգտակարության օրենքի և օգտակարության ֆունկցիայի վրա, որը ձևավորվում է այդ օրենքի հիման վրա: Բացի այդ, այս մեթոդը ենթադրում է տարբեր եկամուտների մակարդակով բնակչության տարբեր խմբերի միջև նախագծի օգուտների բաշխման կշիռների որոշման անհրաժեշտությունը: Բաշխվող կշիռները նաև անվանում են նախագծի ներգործության սոցիալական կշիռներ: Դրանք պայմանական հաշվարկային միավորներ են, որոնք բնութագրում են սահմանային օգտակարության առանձգականությունը ըստ եկամտի՝ նախագծում ներառված յուրաքանչյուր խմբի համար: Բաշխվող կշիռները պետական նախագծի ազդեցությունն է բնակչության խմբերի միջև նախագծերի օգուտների բաշխման վրա, դրանք իրենցից ներկայացնում են պայմանական հաշվարկային միավորներ, որոնք բնութագրում են յուրաքանչյուր խմբի համար սահմանային օգտակարության առանձգականությունը ըստ եկամտի: *Սահմանային օգտակարության առանձգականությունը* ըստ եկամտի իրենից ներկայացնում է գործակից, որը ցույց է տալիս մարդկանց խմբի սահմանային օգտակարության ավելացման մակարդակը նրանց եկամտի 1% ավելացման դեպքում: Բաշխվող կշիների որոշումից հետո անհրաժեշտ է յուրաքանչյուր խմբի համար նախագծից օգուտը կամ կորուստը բազմապատկել այդ սոցիալական կշիռներով: Ստացվում են կշռված սոցիալական օգուտներ կամ կորուստներ ըստ խմբերի: Գումարելով այդ օգուտները և կորուստները՝ կարելի է ստանալ նախագծի զուտ կշռված սոցիալական օգուտը: Նախագծերի տարբերակների համեմատման դեպքում ընտրում են ամենամեծ զուտ կշռված օգուտով նախագիծը: Այդպիսի մոտեցումը թույլ է տալիս գնահատել նախագծի ազդեցությունը բնակչության տարբեր խմբերի միջև օգուտների բաշխման վրա:

Հասարակական նախագծի բաշխման վրա ազդեցության գնահատման երկրորդ մեթոդը դա *ընդհանուր անհավասարակշռության փոփոխության գնահատման մեթոդն է:* Այն կիրառվում է համազգային նախագծերի օգուտների բաշխման գնահատման ժամանակ, օրինակ՝ սոցիալական արտոնությունների համակարգում փոփոխությունների նախագիծը, եկամտահարկի փոփոխությունների նախագիծը: Սրանք նախագծեր են, որոնք ունեն զգալի բաշխող էֆեկտ: Համեմատվում են եկամուտների բաշխման մեջ անհավասարության ցուցանիշները հասարակական նախագծի իրականացումից առաջ և հետո: Այդ առումով եկամուտների բաշխման մեջ կիրառվում են անհավասարության տարբեր

[1] Безденежных М. М., Экономика общественного сектора. Учеб. пособие. Новосибирск, 2003.

ցուցանիշներ, մասնավորապես՝աղքատության ինդեքս, աղքատության ճեղքվածք, Լորենցի բաշխում և Ջինիի գործակից, Դալտոն-Ատկինսոնի ցուցանիշ[1]:

Աղքատության ինդեքսը բնակչության այն մասն է, որոնց եկամուտները ցածր են նվազագույն կենսամինիմումից: «Աղքատության ճեղքվածքը» ազգային եկամտի այն բացարձակ մեծությունն է, որն անհրաժեշտ է, որպեսզի աղքատ բնակչության եկամուտները բարձրացվեն մինչև նվազագույն կենսամինիմումը: Լորենցի բաշխումը և Ջինիի գործակիցը արտահայտում են եկամուտների անհավասար բաշխման աստիճանը: Դալտոն-Ատկինսոնի ցուցանիշը ցույց է տալիս ազգային եկամտի այն մասը, որից հասարակությունը կնախընտրի հրաժարվել, որպեսզի հասարակությունում տեղի ունենա եկամտի հավասարաչափ բաշխում: Այստեղ ենթադրվում է, որ հասարակությունը նախընտրում է հավասարաչափ բաշխում: Դալտոն-Ատկինսոնի ցուցանիշը տալիս է այն հարցի պատասխանը, թե որքան միջոցներ հասարակությունը կհամաձայներ տալ, որպեսզի փաստացի բաշխման կորը տեղաշարժեր դեպի հավասարաչափ բաշխումը, այսինքն իրական բաշխման կորը համընկներ նորմալ բաշխման կորի հետ: Ակնհայտ է, որ տարբեր մարդիկ տարբեր կերպ են ընկալում Դալտոն-Ատկինսոնի ցուցանիշը: Ընդհանրապես, այն կախված է բարեկեցության այն ֆունկցիայից, որը նախընտրում է հասարակությունը: Օրինակ՝ բարեկեցության ռոուլսյան ֆունկցիայի դեպքում այն ավելի բարձր է, քան ուտիլիտար ֆունկցիայի դեպքում: Որոշ գնահատումներով այն տատանվում է ընդհանուր եկամտի 1/4-ից մինչև 1/3՝ կախված երկրի զարգացման մակարդակից:

Հանրային ծրագրերը դրական են ազդում հասարակության մեջ եկամուտների բաշխման վրա, եթե աղքատության ինդեքսը փոքրանում է, «աղքատության ճեղքվածքը» նվազում է, նոր Լորենցի բաշխումը գտնվում է հնի ներսում, Ջինիի գործակիցը նվազում է և ձգտում է 0-ի, Դալտոն-Ատկինսոնի ցուցանիշը մեծանում է:

Հանրային ծրագրերի գնահատման ժամանակ կարևորագույն խնդիր է հանդիսանում ստացվող օգուտների արժեքային գնահատումը, որը հաճախ շատ դժվար է, ուստի կիրառվում ծախսերի արդյունավետության վերլուծությունը մեթոդը որով գնահատվում է պետական նախագծերի տարբերակների արդյունավետությունը, որոնց արդյունքները համադրվում են ոչ արժեքային ցուցանիշների հետ: Ծախսերի արդյունավետության վերլուծությունը ավելի հեշտ է «ծախսեր-արդյունքներ» վերլուծությունից, քանի որ թույլ է տալիս խուսափել նախագծից օգուտների արժեքային գնահատումից: Բայց, այդուհանդերձ, պահպանվում են դժվարությունները կապված նախագծի ծախսերի արժեքային գնահատման հետ: Այս խնդիրների լուծումը ենթադրում է ստվերային գների, հասարակական տոկոսադրույքի, կողմնակի ծախսերի մասնագիտական գնահատման կիրառում: Դրա հետ մեկտեղ, նույնիսկ ծախսերի գնահատման ոչ կատարյալ մեթոդը վերահսկում է նրանց, ովքեր հասարակական ընտրության գործընթացում որոշումներ են ընդունում, նրանց դրդում է հասարակական միջոցների արդյունավետ օգտագործմանը և հնարավոր ծախսերի բազմակողմանի գնահատմանը:

---

[1] Аткинсон Э., Стиглиц Д., Лекции по экономической теории государственного сектора. М.: Аспект-Пресс, 1995.

МУШЕГ АКОПЯН

ПРОБЛЕМЫ АНАЛИЗА И ОЦЕНКИ ГОСУДАРСТВЕННОЙ ПРОГРАММЫ

Ключевые слова: *общественная программа, жизненная ценность, общественное предпочтение, эффективное распределение, распределенный вес, социальная справедливость*

Эта статья представляет собой комбинацию затрат на реализацию государственных программ и ожидаемых результатов, что подчеркивает необходимость оценки цен на основе результатов, не основанных на рыночных ценах. Обсуждались методы оценки ценности жизни, ценности природного богатства и т.д. В статье также была оценена эффективность распределения государственных программ.

MUSHEGH HAKOBYAN

PUBLIC PROGRAM ANALYSIS AND ASSESSMENT ISSUES

Key words: *public program, life value, public preference, effective distribution, distributed weight, social justice*

The article is a combination of the cost of implementing public programs and anticipated outcomes, highlighting the need to assess non market-based outcomes prices.There have been discussed the methods for evaluating the value of life, the value of natural wealth ect. The article also assessed the effectiveness of the distribution of public programs.

ՎԼԱԴԻՄԻՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

ՏԻԳՐԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր, դոցենտ

ՀԱՐԿԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Հիմնաբառեր. *հարկեր, հարկման արդյունավետություն, ուղղակի հարկեր, անուղղակի հարկեր, հարկային քաղաքականություն, հարկային մարմին, շահութահարկ եկամտահարկ, ակցիզային հարկ*

Հոդվածում վերլուծվել են հարկերի դասակարգման հատկանիշները և բնորոշվել դրանց տեսակներն ու գործառույթները: Բացի այդ, հիմնավորվել է, որ արդյունավետ հարկային քաղաքականությամբ հնարավոր է խթանել տնտեսական ակտիվությունը՝ գործնականում իրականացնելով արդարացիության համապատասխան գործառույթներ: